Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

1) որոշման N 2 հավելվածում՝

ա. 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին ենթակետով.

«2.1) ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թիվը.»,

բ. 3-րդ կետի 9-րդ ենթակետում «26» թիվը փոխարինել «30» թվով, 14-րդ ենթակետում «22» թիվը՝ «17» թվով, 15-րդ ենթակետում «աշխատանքի շուկայում անմրցունակ անձ» բառերը՝ «առանձին խմբի գործազուրկ» բառերով, 19-րդ ենթակետում «17» թիվը՝ «15» թվով,

գ. 3-րդ կետի 12-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) չափահաս անձ՝ մինչև 19 տարեկան Ա77 30»,

դ. 3-րդ կետը 15-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին և 15.2-րդ ենթակետերով.

«15.1) խնամքին երեխա ունեցող կին Գ97 17

15.2) աշխատող անձ Գ96 17»,

ե. հավելվածը 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին կետով.

«8.1. Ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թիվն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում Kեր գործակցով՝

$K_{եր} = 1,00 + 0,01\ m$,

որտեղ m-ն ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թիվն է.»,

զ. 18-րդ կետի բանաձևում «d» տառը փոխարինել «n» տառով,

է. 18-րդ կետից հանել «d-ն սոցիալական անձնագրի լրացման պահին տվյալ բնակության վայրում ընտանիքի հաշվառված և փաստացի բնակվող բոլոր անդամների թիվն է,» բառերը,

ը. 19-րդ կետի բանաձևը «$K_{ընտ}$» տառերից հետո լրացնել «x $K_{եր}$» տառերով.

2) որոշման N 3 հավելվածում՝

ա. 13-րդ կետի 12-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) չափահաս անձ՝ մինչև 19 տարեկան Ա77

պահանջվող փաստաթուղթը՝ անձնագրի (նույնականացման քարտ) լուսապատճենը.»,

բ. 13-րդ կետի 15-րդ ենթակետում «աշխատանքի շուկայում անմրցունակ անձ» բառերը փոխարինել «առանձին խմբի գործազուրկ» բառերով, իսկ «կենտրոնից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև միջգերատեսչական սոցիալական համագործակցության շրջանակներում ստացված տվյալ» բառերով,

գ. 13-րդ կետը 15-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին և 15.2-րդ ենթակետերով.

«15.1) խնամքին երեխա ունեցող կին Գ97

պահանջվող փաստաթուղթը՝ հայտարարություն երեխա (այդ թվում՝ նաև խորթ) խնամելու մասին, իսկ իր երեխային չխնամելու դեպքում՝ նաև խնամակալության մասին փաստաթղթի պատճենը.

15.2) աշխատող անձ Գ96

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք աշխատավայրից՝ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների մասին.»,

դ. 14-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «չաշխատող» բառը,

ե. 14-րդ կետի 6-րդ ենթակետում «աշխատանքի շուկայում անմրցունակ անձ» բառերը փոխարինել «առանձին խմբի գործազուրկ» բառերով,

զ. 14-րդ կետը 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին և 6.2-րդ ենթակետերով.

«6.1) «խնամքին երեխա ունեցող կին» սոցիալական խումբն այլ սոցիալական խմբերի հետ չի ամրագրվում.

6.2) առանձին խմբի գործազուրկ է համարվում այն գործազուրկը, որը՝

ա. երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում և 16-30 տարիքային խմբում է, թրաֆիքինգի զոհ է, վերադարձել է քրեակատարողական հիմնարկից (մինչև երեք տարի), կրում է այլընտրանքային պատիժ (ամբողջ ժամանակահատվածը և դրան հաջորդող մեկ տարին), թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածումը դադարեցրած՝ ռեմիսիայի շրջանում գտնվող անձ է,

բ. 31-63 տարիքային խմբում է և մեկ տարվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.»,

է. 14-րդ կետի 9-րդ ենթակետում «և «Ս 22» ծածկագրերի» բառերը փոխարինել «ծածկագրի» բառով,

ը. 14-րդ կետի 10-րդ ենթակետում «աշխատանքի շուկայում անմրցունակ անձ» բառերը փոխարինել «առանձին խմբի գործազուրկ» բառերով.

թ. հավելվածը 25-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25.1-ին կետով.

«25.1. Ընտանիքի «բացակա» անդամի աշխատավարձի ամսական չափը հաշվարկվում է ընտանիքի չափահաս անդամի հայտարարության հիման վրա՝ տարվա համար հայտարարված եկամտի մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով՝ հետևյալ դեպքերում՝

1) եթե ընտանիքի «բացակա» անդամը Հայաստանի Հանրապետությունում է և ընտանիքի անդամներից որևէ մեկի ամուսինն է.

2) եթե ընտանիքի «բացակա» անդամը Հայաստանի Հանրապետությունից բացակայում է մինչև 6 ամիս ժամկետով՝ բացառությամբ ուսման կամ բուժման նպատակով բացակայելու դեպքերի (որի մասին ներկայացվում է համապատասխան փաստաթուղթ) և ընտանիքի անդամներից որևէ մեկի ամուսինն է:»,

ժ. 28-րդ կետում «Մ 23» կամ «Ե 56» ծածկագիրն» բառերը փոխարինել «դրա իրավունքն» բառերով,

ժա. 33-րդ կետի 5-րդ ենթակետում «անմրցունակ» բառը փոխարինել «առանձին խմբի» բառերով,

ժբ. հավելվածի N 1 ձևի «Տեղեկություններ սեփականության, բնակարանային և կենցաղային պայմանների մասին» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տեղեկություններ բնակարանային պայմանների, սեփականության և կոմունալ հարմարությունների առկայության մասին

Բնակարանային պայմանները	Այո/ոչ	Սեփականությունը	Տեղեկությունները	Կոմունալ հարմարությունների առկայությունը	Այո/ոչ	Արոնենտի գրքույկի համարը
Առանձին բնակարան (առանձնատուն)		ՍՊԸ, ՓԲԸ, ԲԲԸ, ԼՏԸ (մասնաբաժին և այլն)		էլեկտրականություն		
Ոչ հիմնական շինություն		առանձին բնակարան (առանձնատուն), ավտոտնակ, ամառանոց, օժանդակ շինություններ (անասնագոմ, մրգի սառնարան և այլն)		կենտրոնական ջեռուցում		
Հանրակացարան		ավտոմեքենա (մակնիշը, տեխզննման		ջեռուցման անհատական		

		ամսաթիվը, պետհամա-րանիշը)			համակարգ			
Տնակ		գյուղտեխնիկա (մակնիշը և տեսակը)			բնական գազ			
Վթարային բնակարան (3-րդ կամ 4-րդ աստիճանի)		անասնատեսակ (այո/ոչ)			հեռախոս (այդ թվում՝ բջջային)			
Անօթևան		այլ եկամուտներ (առևտրային գործունեություն) և այլն			ջրաչափ			
Այլ								»,

ժգ. հավելվածի N 4 ձևի 24-րդ կետից հանել «տեղեկանք՝ տեղական ռեգիստրից կամ» բառերը,

ժդ. հավելվածի N 4 ձևի 31-րդ կետը «մարմնից» բառից հետո լրացնել «, ընտանիքի «բացակա» անդամի դեպքում՝ հայտարարությամբ» բառերով,

ժե. հավելվածի N 8 ձևում «21 օրացուցային» բառերը փոխարինել «30» թվով.

3) որոշման N 5 հավելվածում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը,

բ. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Մինչև չորս անդամներ ունեցող ընտանիքի անասնապահությունից ստացվող ամսական եկամուտը հաշվարկվում է տարեկան 150000 դրամը գերազանցող գումարի մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով, իսկ չորս և ավելի անդամներ ունեցող ընտանիքի անասնապահությունից ստացվող ամսական եկամուտը՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար տարեկան 50000 դրամը գերազանցող գումարի մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով՝ համաձայն աղյուսակի։».

4) որոշման N 6 հավելվածի 41-րդ կետը «միջոցով՝» բառից հետո լրացնել «էլեկտրոնային» բառով.

5) որոշման N 7 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ կետով.

«	9.	Հայաստանի	ՀՀ-ից ելք ու	ՀՀ-ից դուրս եկող	յուրա-	հաջորդ	առցանց՝ վեր	Տեղեկատվություն

	Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն	մուտքի վերաբերյալ	կամ մուտք գործող անձի ազգանունը, անունը, անձնագրի համարը, ՀՀ-ից ելքի կամ մուտքի օրը, ամիսը, տարեթիվը	քանչյուր ամիս	ամսվա 10-ը	ծառայության միջոցով	ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների անդամների կողմից ՀՀ-ից ելքի կամ մուտք գործելու վերաբերյալ, նշելով տվյալ անձի (անձանց) ազգանունը, անունը, անձնագրի համարը, ՀՀ-ից ելքի կամ մուտքի օրը, ամիսը, տարեթիվը

2. Սահմանել, որ որոշման N 3 հավելվածի 14-րդ կետի 6.2-րդ ենթակետով «առանձին խմբի գործազուրկ» սոցիալական խմբի ամրագրման համար սահմանված ժամկետները հաշվարկվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 1-ից: